ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքումը նպատակ է հետապնդում կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև քաղաքական, ռազմական, տնտեսական, գիտատեխնիկական կամ այլ համագործակցության ընթացքում փոխանակվող կամ այդպիսի համագործակցության ընթացքում առաջացող գաղտնի տեղեկատվության պաշտպանության ապահովումը և սահմանում է գաղտնի տեղեկատվության փոխանակման կարգն ու պայմանները:

Հաշվի առնելով, որ Համաձայնագրով կարգավորվող հարաբերությունները միջկառավարական համագործակցության, փոխօգնության, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարաբերություններ են և դրանք, ըստ էության, վերաբերում են Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասության ոլորտին, ինչպես նաև նկատի ունենալով, որ առկա նմանատիպ երկկողմ հարաբերությունները այլ պետությունների հետ կարգավորվում են միջկառավարական պայմանագրերով (համաձայնագրերով), ուստի Համաձայնագիրը անհրաժեշտ է կնքել միջկառավարական մակարդակով:

Համաձայնագրի կնքումը նպատակահարմար է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև գաղտնի տեղեկատվության փոխանակման և պաշտպանության իրավական փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առկա պահանջից, Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև համագործակցության ընթացքում գաղտնի տեղեկատվության փոխանակման և պաշտպանության համար կանոններ սահմանելու անհրաժեշտությունից:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն